Ոչ ռեզիդենտ հաճախորդների բրոքերային հաշիվների սպասարկման պայմանները.

- սահմանել նախապայման, ըստ որի հաճախորդը պետք է համալրի բրոքերային հաշիվը 3 աշխատանքային օրվա ընթացքում,
- այն դեպքերում, երբ ամբողջ գումարը չի փոխանցվում բրոքերային հաշվի համալրմանը, բրոքերային հաշվին չփոխանցվող գումարից գանձվում է 2% միջնորդավճար, եթե այլ բան նախատեսված չէ համաձայնագրով, և բացառությամբ այն դեպքերի, երբ ստացված գումարները Յունիբանկում փոխարկվում են այլ արժույթի կամ ներդրվում են Բանկի ներդրումային գործիքներում (ավանդ՝ նվազագույնը երեք ամիս ժամկետով, պարտատոմս, բաժնետոմս),
- սահմանել նախապայման, ըստ որի բրոքերային հաշիվը համալրելուց հետո միջոցները պետք է մնան հաշվին առնվազն 3 ամիս, իսկ միջոցների՝ 3 ամսից շուտ դուրսբերման պարագայում սահմանել միջնորդավճար՝ 2% չափով,
- սահմանել նախապայման, ըստ որի բրոքերային հաշվին մուտքագրված միջոցների առնվազն 80%-ը պետք է ներդրված լինի արժեթղթերում,
- սահամնել, որ եթե բրոքերային հաշվի համալրումն իրականացվել է կանխիկ, ապա նույն արժույթով հետագա կանխիկացումն իրականացվի առանց միջնորդավճարի գանձման: